ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ
SPECIAL TOPIC: MESSIAH

Ա. Հին Կտակարանյան կիրառությունը

Այս տերմինի հետ կապված մեկնության դժվարությունը կայանում է նրանում, որ «Մեսիա» կամ «օծյալ» բառին համազոր տարբեր կիրառություններ կան (BDB 603, KB 645): Այս տերմինը կիրառվում էր անձին հատուկ յուղով օծելիս, որպես նշան Աստծո կանչին և նախատեսված առաջնորդական գործի համար պատրաստելիս:

1. կիրառվում էր հրեա թագավորների համար (օրինակ՝ 1 Թագ. 2:10, 12:3, 24:6,10, 2 Թագ. 19:21, 23:1, Սաղմ. 89:51, 132:10,17, Ողբ. 4:20, Ամբ. 3:13, «Օծյալ Իշխան» Դան. 9:25-ում):
2. կիրառվում էր հրեա քահանաների համար (այսինքն՝ «օծյալ քահանաներ», Ելից 29:7, օրինակ՝ Ղևտ. 4:3,5,16, 6:15, 7:36, 8:12, հավանաբար Սաղմ. 84:9-10 և 133:2)
3. կիրառվում էր Նահապետների և մարգարեների համար (տես՝ Ծննդ. 20:7, 1 Մնաց. 16:22, Սաղմ. 105:15, որը վերաբերում է ուխտի հավաքական ժողովրդին. հավանաբար Ամբ. 3:13)
4. կիրառվում էր մարգարեների համար (տես՝ 3 Թագ. 19:16, հավանաբար՝ 1 Մնաց. 29:22 և Եսայի 61:1)
5. կիրառվել է Կյուրոս II-ի համար (այսինքն՝ մի հեթանոս արքայի, տես՝ Եսայի 45:1)
6. #1 և #2 միասին Սաղմոս 110 և Զաքարիա 4-ում
7. կիրառվում է Աստծո կողմից հատուկ ուղարկված՝ Դավթի սերնդի Թագավորի համար, որը բերելու է արդարության նոր դարաշրջան (այսինքն՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-36)

   ա. Հուդայի ցեղից (տես՝ Ծննդ. 49:10)

   բ. Հեսսեի տնից (տես՝ 2 Թագ. 7)

   գ. տիեզերական իշխանություն (տես՝ Սաղմ. 2, Ես. 9:6, 11:1-5, Միք. 5:1-4բ, Ամբ. 3:13)

   դ. կարիքավորներին ծառայություն (տես՝ Ես. 61:1-3)
8. կիրառվել է Սաղմոսներում

   Մեսիային վերաբերող շատ ակնարկներ արձանագրված են Արքայական Սաղմոսներում (այսինքն՝ Սաղմոս 2, 18, 20, 21, 45, 72, 89, 101, 110, 132, 144): Համատեքստում դրանք վերաբերում են Դավթի սերնդից օծյալ Թագավորին, բայց քանի որ կանխատեսումները երբեք չեն իրականացել Իսրայելի պատմության մեջ, շատ մեկնաբաններ պնդում են, որ դա վերաբերում է վերջին ժամանակներին:

Բ. Նոր Կտակարանյան կիրառությունը

Անձամբ ես համամիտ եմ այն մտքին, որ «օծյալը» Նազովրեցի Հիսուսն է (տես՝ Հովհ. 1:41, 4:25), քանի որ՝

1. Դանիել 2-ում ներկայացվում է հավիտենական Թագավորություն՝ չորրորդ կայսրության ընթացքում (այսինքն՝ Հռոմեականը)
2. Դան. 7:13-ում ներկայացվում է «մարդու որդու», որին տրվում է հավիտենական թագավորություն
3. Դանիել 9:24-ի փրկագործությանը վերաբերող ենթանախադասությունները, որոնք մատնացույց են անում ընկած աշխարհի պատմության կուլմինացիային՝ վերջաբանին
4. Հիսուսը կիրառում է Դանիելի գիրքը ՆԿ-ում (տես՝ Մատթ. 24:15, Մարկ. 13:14):

   Պետք է ընդունել, որ սա հազվադեպ տիտղոս է ՀԿ-ում, հավանաբար միայն Դան. 9:25-ում (նաև կիրառված է վերջին ժամանակների մեկ այլ անձի վերաբերյալ՝ Դան. 9:26-ում): Չնայած որ «Մեսիա» տիտղոսը հազվադեպ է, Դավթի սերնդից Թագավորի գաղափարը, որը իշխելու է ՅԱՀՎԵի ժողովրդի վրա, պարբերաբար կրկնվող է: Նաև պետք է որ ընդունել, որ Հիսուսը չի համապատասխանում ՀԿ-յան Մեսիայի ընդհանուր նկարագրությանը:

ա. Իսրայելում առաջնորդ չէր
բ. պաշտոնապես քահանայի կողմից օծված չէր
գ. միայն Իսրայելի համար փրկիչ չէր
դ. ոչ միայն «մարդու որդի», այլ զարմանալիորեն նաև «Աստծո Որդի» էր

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻ